ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«13» 09 2012 թ. N 49/1-9-1-2/6388-12

ՁԵՐ 04.09.2012թ. N 179-ի 2

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ՝ Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Հայտնում ենք, որ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի միջազգային կազմկերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների, խորհրդակցությունների (վեհաժողովների) կազմակերպման նպատակով նախատեսվել է 1.5 մլն դրամ: Պետական բյուջեի վերոնշյալ ծառայությունների գնումների անվանացանկով ծախսերը նախատեսվել են "Խորհրդակցությունների (վեհաժողովների) կազմակերպման ծառայություններ, ներկայացուցչական ծախսեր" ընդհանուր տողով, այսինքն խմիչքների և ուտեստների համար միջոցները առանձնացված չեն:

Առ 12 սեպտեմբերի 2012 թվականի դրությամբ վերոնշյալ նպատակի համար ծախսվել է 468.83 հազար դրամ, որից խմիչքների ձերքբերման համար ծախսվել է 84.0 հազար դրամ, իսկ ուտեստների համար՝ 110.9 հազար դրամ:

Վերոնշյալ գնումները կատարվել են հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 168-Ն որոշման 32-րդ կետի 4 ենթակետի դրույթները (բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու), գնման պահանջի ծագման դեպքում: Գնման երկու պայմանագրերը կնքվել են "Գոհար Ներսեսի Մխիթարյան" ԱՁ-ի հետ (մթերային խանութ):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն
հեռ. 580780

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 58 16 82, ֆաքս. (374 10) 52 08 30 http://www.mss.am